ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-248[2]-29.04.2022-ՏԵ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել ներքոնշյալ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները, եթե՝

1) նրանք ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համաձայն համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում,

2) նրանք ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համաձայն համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, և որոնց ներմուծման դեպքում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան կիրառվում են միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր և հարկեր,

3) մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրակա-

նացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող՝ ապրանքների ներմուծման գործառ-նություններ:»:

Հոդված 2. Օրենսգիրք 64-րդ հոդվածի 2-րդ մասի 41-րդ, 42-րդ և 43-րդ կետերում «անձնական օգտագործման գույքի» բառերը փոխարինել «անձնական օգտագործման ապրանքի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք

ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 4. ~~Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հ~~Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել ներքոնշյալ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները, եթե՝

4) նրանք ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համաձայն համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում,

5) նրանք ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համաձայն համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, և որոնց ներմուծման դեպքում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին համապատասխան կիրառվում

են միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր և հարկեր,

6) մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող՝ ապրանքների ներմուծման գործառնություններ:»:

Հոդված 5. Օրենսգիրք 64-րդ հոդվածի 2-րդ մասի 41-րդ, 42-րդ և 43-րդ կետերում «անձնական օգտագործման գույքի» բառերը փոխարինել «անձնական օգտագործման ապրանքի» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-248-29.04.2022-ՏԵ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-248[1]-29.04.2022-ՏԵ-011/1, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-248[2]-29.04.2022-ՏԵ-011/1, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-248[3]-29.04.2022-ՏԵ-011/1, «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-248[4]-29.04.2022-ՏԵ-011/1, «ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-248[5]-29.04.2022-ՏԵ-011/1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածում նախատեսել նոր 4-րդ մաս՝ հետևյալ խմբագրությամբ. «4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքները համարվում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, և դրանց՝ առանց մաքսային մարմնի թույլտվության սույն օրենքի	Ընդունվել է	Ընդունվել է

			191-րդ հոդվածով նախատեսված գործողություններ կատարելը հանգեցնում է սույն օրենքով սահմանված պատասխանատվության։»:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասում ներկայացնելու բառից հետո ավելացնել թույլտվության առկայության բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 11-րդ հոդվածի 8-րդ մաս	Հաշվի առնելով այն, որ ԵԱՏՄ ԱՏԳ ապրանքային անվանացանկը յուրաքանչյուր 5 տարին մեկ թարմացվում է՝ հաստատելով նոր խմբագրություն, ընդ որում նոր խմբագրության հրապարակումից հետո անհրաժեշտ է ստուգել արդեն իսկ տրամադրված որոշումներով հաստատված ծածկագրերի համապատասխանությունը ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի նոր խմբագրությամբ հաստատված ծածկագրերին, իսկ անհապատասխանության հայտնաբերման դեպքում պետք է տրամադրված որոշումները ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետում հետ կանչվեն և տրամադրվեն նոր որոշումներ, ինչը մարդկային և աշխատաժամանակի բավականին մեծ ռեսուրս է պահանջում, ուստի առաջարկվում է Նախագծի 11-րդ հոդվածի 8-րդ մասում նշված 5 տարի ժամկետը փոխարինել 3 տարի ժամկետով և ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների գործողության ժամկետը թողնել հին խմբագրությամբ գործող ժամկետը՝ 3 տարի:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 13-րդ հոդվածում՝ 1-ին մասից հետո լրացնել նոր 2-րդ մաս՝ հետևյալ խմբագրությամբ. «2. Միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միու-	Ընդունվել է	Ընդունվել է

			թյան մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումը մաքսային մարմինն ընդունում է մինչև այդ ապրանքների ներմուծումը։»։ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված է, որ համապատասխան անձանց դիմումով մաքսային մարմինները կարող են իրականացնել ապրանքների դասակարգում՝ նախքան դրանց մաքսային հայտարարագրումը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համաձայն ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ և չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումներ ընդունելու միջոցով։ Հաշվի առնելով վերոգրյալը՝ այդ հնարավորությունը նախատեսվում է նաև Նախագծում։		
5.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «բեռնային տեղերը» բառերից հետո ավելացնել կամ այդպիսի վայրի փոփոխությունը պայմանավորված է ապրանքների պահպանության կամ մաքսային հսկողության համար անհրաժեշտ առավել բարենպաստ պայմաններ և հնարավորություններ ապահովելու անհրաժեշտությամբ բառերը։	Ընդունվել է	Ընդունվել է

6.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 71-րդ հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 71-րդ հոդվածի 8-րդ մասը հանել, քանի որ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով նախատեսված վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանումը կլինի պարզապես անհնար, քանի որ Միության մաքսային օրենսգրքի 99-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ ժամանակավոր պահպանության վայրեր կարող են սահմանվել նաև ազգային օրենսդրությամբ, իսկ Նախագծի 71-րդ հոդվածով սահմանված ժամանակավոր պահպանման վայրերի զգալի հատվածը ուղղակի չի կարող համապատասխանել ժամանակավոր պահպանման պահեստների համար օրենքով նախատեսված կամ Կառավարության սահմանած չափանիշներին:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 73-րդ հոդված 3-րդ մաս	Նախագծի 73-րդ հոդվածը 2-րդ մասից հետո լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. 3. Ապրանքներ ստացողի պահեստում ապրանքների ժամանակավոր պահպանման թույլտվությունը կարող է լինել միանգամյա՝ ապրանքների որոշակի խմբաքանակի ժամանակավոր պահպանության համար, կամ բազմակի՝ որոշակի ժամանակահատվածում օտարերկրյա ապրանքների պարբերական ժամանակավոր պահպանության համար:»:	Ընդունվել է	Ընդունվել է
8.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 73-րդ հոդվածի 8-րդ մաս և Նախագծի 71-րդ հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 73-րդ հոդվածի 7-րդ մասը՝ նոր խմբագրութան 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Կառավարությունը սահմանում է ապրանքները և տրանսպորտային միջոցները ստացողի պահեստ հանձնելու ժամանակ մաքսային մարմին փաստաթղթեր և տեղեկություններ ներկայացնելու, ապրանքները և	Ընդունվել է	Ընդունվել է

			տրանսպորտային միջոցները ժամանակավոր պահպանման վայր հանձնելու և նշված վայրից հանելու կարգը։»։ Նախագծի 73-րդ հոդվածի 7-րդ մասը տեխնիկական վրիպակի պատճառով անավարտ է մնացել։ Հետևաբար, առաջարկվում է այն խմբագրել այնպես, որ բացառվի Նախագծի 71-րդ հոդվածի 7-րդ մասին հակասելու հնարավորությունը՝ հստակ սահմանելով կարգավորման ենթակա հարցերի շրջանակը և դրանք կարգավորելու լիազորություններով օժտված մարմինները։ Միաժամանակ, Նախագծի 71-րդ հոդվածի 7-րդ մասում «Կառավարությունը սահմանում է» և «տեղեկություններ ներկայացնելու, ապրանքները» բառերից հետո լրացվում է «ապրանքները և տրա-նսպորտային միջոցները» բառերը։		
9.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 82-րդ հոդվածի 10-րդ մաս	Նախագծի 82-րդ հոդվածի 10-րդ մասը առաջարկվում է համապատասխանեցնել ՀՀ Կառավարության 03.10.2019թ. թիվ 1327-Ն որոշմամբ հաստատված մաքսային հսկողության ընթացակարգերի սահմանումներին և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայտարարագրի գրանցումից հետո ռիսկերի կառավարման համակարգում մաքսային հսկողության իրականացման նպատակով ինքնաշխատ եղանակով ձևավորվում է ռիսկի պրոֆիլներին համապատասխան ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցումներով հսկողության ակտ, որում ներառվող ցուցումները բխում են մաքսային հսկողության ընթացակարգերից»։	Ընդունվել է	Ընդունվել է

10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 88-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի 88-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետը առաջարկում ենք սահմանափակել 5 տարով՝ հաշվի առնելով ԱՏԳ ԱԱ հերթական վերախմբագրման հանգամանքը՝ կապված վերջինիս միջազգային հիմք հանդիսացող ապրանքների նկարագրման և ծածկագրման Ներդաշնակ համակարգի հերթական հրատարակության հետ (յուրաքանչյուր 5 տարին մեկ)։	Ընդունվել է	Ընդունվել է
11.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 96-րդ հոդվածի 3-րդ մաս 1-ին ենթակետ	Նախագծի 96-րդ հոդվածի 3-րդ մաս 1-ին ենթակետի 2-4-րդ պարբերությունները, շարադրվել են հետևյալ խմբագրությամբ՝ «2023 թվականի համար՝ մաքսային ներկայացուցչի ներկայացրած ապահովման 20 տոկոսը. 2024 թվականի համար՝ մաքսային ներկայացուցչի ներկայացրած ապահովման 35 տոկոսը. 2025 թվականի և հաջորդող տարիների համար՝ մաքսային ներկայացուցչի ներկայացրած ապահովման 50 տոկոսը.»:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 105-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 105-րդ հոդվածի 4-րդ մասի սկզբում լրացվել է «Միության մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝» բառերը։ Կատարվող փոփոխությունը հստակեցնող բնույթ ունի, քանի որ այս դրույթը կիրառելի է «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածքում սկսվող և ավարտվող տարանցման դեպքերին՝ հղում կատարելով ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 142-րդ հոդվածի 10-րդ կետին, քանի որ երկու և ավելի	Ընդունվել է	Ընդունվել է

			երկրների տարածքով տարանցման դեպքերում առաքման վայրի փոփոխության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են Հանձնաժողովի 170 որոշմամբ:		
13.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 218-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 218-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել: Նախագծի 218-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվում է «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմին» ձևը, իսկ Նախագծի ամբողջ տեքստում՝ «մաքսային մարմին» ձև: Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները՝ անհրաժեշտ է հասկացությունները կիրառել նույն ձևով:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 226-րդ հոդված 6-րդ մաս	Նախագծի 226-րդ հոդվածի 6-րդ մասը անհրաժեշտ է հանել՝ հաշվի առնելով, որ օրենքի դրույթների և կառավարության որոշումների կիրառելիության վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների հետ կապված հարցերը կարգավորված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով և ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի թիվ 1159-Ն որոշմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 270-րդ, 276-րդ և 281-րդ հոդվածների 2-րդ մաս	Նախագծի 270-րդ, 276-րդ և 281-րդ հոդվածների 2-րդ մասերում ապահովվել է Նախագծի 270 հոդվածի 2-րդ մասի 2-8 կետերի, 276-րդ հոդվածի 2-րդ մասի 1-7 և 9 կետերի խմբագրության հետ նմանությունը՝ Նախագծի 270 հոդվածի 2-րդ մասի 1 կետի, 276-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի, 281-րդ հոդվածի 2-րդ մասի 1-8-րդ կետերի սկզբում լրացվել է «ապահովել» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է

16.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 308-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 308-րդ հոդվածի 1-ին մասում «բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները հանձնելու» բառերը շարադրել «բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները հանձնելու դեպքի» խմբագրությամբ և այդ բառերը ներառել փակագծերում:	Ընդունվել է	Ընդունվել է
17.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 309-րդ հոդվածում լրացվել է 4-րդ մաս	Նախագծի 309-րդ հոդվածում լրացվել է 4-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ՝ «4. Միության անդամ երկրների ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ այլ պետություններում հաշվառված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելուց հետո Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու՝ սույն օրենքի 178-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում այդ տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետությունից դուրս չբերելը՝ առաջացնում է տուգանք 30 հազար դրամի չափով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 310-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Նախագծի 310-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը» բառերը, իսկ 1-ին մասից հետո լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ . «2. Հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված	Ընդունվել է	Ընդունվել է

			ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելը՝ առաջացնում է տուգանք՝ խախտման օրվա դրությամբ, եթե այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները ներմուծվեին «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, դրանց համար մաքսային վճարների, այլ հարկերի, տուրքերի և վճարների (բացառությամբ՝ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի) մեծության քսան տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հիսուն հազար դրամի չափով։»։ Վերոնշյալ փոփոխությունը կատարվում է այն պատճառով, որ անհրաժեշտ է տարանջատել հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու և հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում ՀՀ չներմուծելու խախտումների համար նախատեսված պատասխանատվության ձևավորման նկարագրությունը։		
19.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 315-րդ հոդվածի	Առաջարկում ենք հանել Նախագծի 315-րդ հոդվածը։ Կարծում ենք Նախագծի 315-րդ հոդվածը պրակտիկայում կարող է հանգեցնել տարընկալումների, քանի որ դրանում ներառված ձևակերպումները ենթադրում են հանցագործության առկայություն, սակայն արարքը դիտարկվում է որպես զանցանք։	Ընդունվել է	Ընդունվել է

20.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 317-րդ հոդվածի 4-րդ մաս (նոր խմբագրությամբ 316-րդ հոդված)	Առաջարկում ենք Նախագծի 317-րդ հոդվածի 4-րդ մասը հանել (նոր խմբագրությամբ 316-րդ հոդված)։ Նախագծի 317-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, ինչի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի և վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի), չհաշվարկում (պակաս հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում), ինչպես նաև արգելքների և սահմանափակումների, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է նախազգուշացում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները չհայտարարագրելը կամ ոչ ճշգրիտ հայտարարագրելը՝ առաջացնում է տուգանք՝ քսան հազար դրամի չափով: Հաշվի առնելով, որ Նախագծի 317-րդ հոդվածի 1-ին մասը ներառում է նաև մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող ապրանքների վերաբերյալ տեղեկությունները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրում ոչ	Ընդունվել է	Ընդունվել է

			ճշգրիտ տեղեկություններ նշելը և այդ մասով առանձին դրույթ նախատեսելը նպատակահարմար չէ:		
21.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 318-րդ հոդվածի 1-ին մաս (նոր խմբագրությամբ 317-րդ հոդվածի 1-ին մաս)	Առաջարկում ենք Նախագծի 318-րդ հոդվածի 1-ին (նոր խմբագրությամբ 317-րդ հոդվածի 1-ին մաս) մասում «ներմուծման մաքսատուրքերի, հարկերի» բառերը փոխարինել «մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի և վճարների» բառերով: Նախագծի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ պայմանական բաց թողնված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները բաց թողնման պայմանի խախտմամբ օգտագործելը կամ տնօրինելը, որը հանգեցրել է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի չվճարման՝ առաջացնում է տուգանք՝ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների համար արտոնությունների կիրառման արդյունքում չհաշվարկված (պակաս հաշվարկված) կամ չվճարված (պակաս վճարված) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի) ընդհանուր գումարի հիսուն տոկոսի չափով: Միաժամանակ, Նախագծի 310-րդ հոդվածի 1-ին մասով, 317-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 319-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումների համաձայն՝ նախատեսված են մաքսային վճարներ, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկեր, տուրքեր և վճարներ եզրույթները:	Ընդունվել է	Ընդունվել է

22.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 321-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 321-րդ հոդվածով, հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 321. Մաքսային հսկողության գոտիներում տեղակայված ապրանքները դրանց բաց թողնումից հետո մաքսային հսկողության գոտու տարածքից դուրս չբերելը** 1. Մաքսային հսկողության գոտիներում տեղակայված ապրանքները, դրանց բաց թողնման օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մաքսային հսկողության գոտու տարածքից ամբողջությամբ կամ մասամբ դուրս չբերելը, եթե այդ ապրանքների բացթողնման պայմաններից չի բխում մաքսային հսկողության տվյալ գոտու տարածքում դրանց գտնվելը, «Մաքսային պահեստ», «Ազատ մաքսային գոտի», «Ազատ պահեստ» կամ «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերից որևէ մեկի շրջանակներում՝ առաջացնում է տուգանք՝ 1) տասը հազար դրամի չափով, եթե իրենց բաց թողնման օրվանից հետո ապրանքները շարունակել են գտնվել մաքսային հսկողության տվյալ գոտու տարածքում ոչ ավելի քան 2 աշխատանքային օր. 2) հինգ հազար դրամի չափով՝ մաքսային հսկողության տվյալ գոտու տարածքից դուրս չբերված ապրանքի յուրաքանչյուր տոննայի (լրիվ կամ ոչ ամբողջական) դիմաց՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը գերազանցող յուրաքանչյուր օրացուցային օրվա համար. 3) սահմանային անցման կետերում՝ տասը հազար դրամի չափով, եթե իրենց բաց թողնման ժամից հետո ապրանքները շարունակել են գտնվել	Ընդունվել է	Ընդունվել է

			մաքսային հսկողության տվյալ գոտու տարածքում ավելի քան 3 ժամ, սակայն ոչ ավելի քան 2 աշխատանքային օր. սահմանային անցման կետերում՝ հինգ հազար դրամի չափով՝ մաքսային հսկողության տվյալ գոտու տարածքից դուրս չբերված ապրանքի յուրաքանչյուր տոննայի (լրիվ կամ ոչ ամբողջական) դիմաց՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետը գերազանցող յուրաքանչյուր օրացուցային օրվա համար։»:		
23.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 322-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասեր	Նախագծի 59-րդ գլխում նախատեսված են մաքսային ոլորտին առնչվող այնպիսի նորմեր, որոնցով սահմանված պահանջները տարբերվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված նորմերի ահանջներից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ օրենսգիրքը ևս համարվում է օրենք, և Նախագծի 322-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված կանոնակարգումներից հստակ չէ, թե հակասություն առաջանալու դեպքում որ իրավական ակտով սահմանված նորմերը պետք է կիրառվեն, Նախագծի 59-րդ գլխի նորմերի կիրառման գերակայությունն ընդգծելու և մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթի՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 322-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Մաքսային ոլորտում սույն օրենքի 58-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			գլխով նախատեսված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է սույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի սույն գլխին չհակասող մասով: 2. Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով այնքանով, որքանով չի կարգավորվում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական ակտերով:»:		
24.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 322-րդ հոդվածի 5-րդ մաս	Հաշվի առնելով, որ մաքսային մարմնում տարածքային ստորաբաժանումներ առկա չեն, առաջարկում ենք 322-րդ հոդվածի 5-րդ մասում «տարածքային մեկ ստորաբաժանումից» և «մեկ այլ տարածքային մաքսային մարմնի» բառերը փոխարինել, համապատասխանաբար, «մեկ կառուցվածքային ստորաբաժանումից» և «մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանման» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
25.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 324-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 324-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթը սկսվում է արձանագրություն կազմելով: Նշվածից հետևում է, որ մաքսային կանոնների խախտման փաստը հայտնաբերելիս ոչ թե կայացվում է վարույթ հարուցելու որոշում, այլ կազմվում է արձանագրություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 324-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու նպատակով կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն.»:	Ընդունվել է	Ընդունվել է

26.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 325-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ քննելով մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործը՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը. 1) վարչական տույժ նշանակելու մասին. 2) գործի վարույթը կարճելու մասին: Միաժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ նույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումը կայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, դրա պատճենը հանձնվում կամ ուղարկվում է այն անձին, որի առնչությամբ այն կայացվել է: Այն դեպքում, երբ անձը, որին ուղարկվել է նույն հոդվածի 1-ին մասում նշված որոշումը, չի գտնվել իր կողմից նշված բնակության, գտնվելու կամ ժամանակավորապես բնակվելու վայրում կամ ճիշտ չի նշել գտնվելու հասցեն, ապա այդ որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, որի մասին անձը ծանուցվում է մաքսային մարմնում առկա իր էլեկտրոնային փոստով: Նախագծի 325-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված արձանագրության մեջ նշվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները, ինչպես նաև մաքսային իրավախախտման մանրամասն նկարագիրը և արարքի վերաբերյալ նախնական որոշումը՝ ըստ Միության մաքսային օրենսգրքի և նույն օրենքի համապատասխան	Ընդունվել է	Ընդունվել է

			հոդվածի, տեղեկություններ՝ վերցված առարկաների և փաստաթղթերի մասին, ինչպես նաև գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ ֆիզիկական անձանց նկատմամբ հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելը հաճախ անհնար է դառնում վերջիններիս գտնվելու վայրն անհայտ լինելու կամ հաշվառման հասցե չունենալու հանգամանքով պայմանավորված, հատկապես այն դեպքերում, երբ իրավախախտում կատարած անձը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ էլեկտրոնային փոստի առկայությունը հնարավորություն կտա անձին վարչական վարույթի ընթացքում ապահովելու իր իրավունքների իրացումը և միաժամանակ, կապահովվի Նախագծի 334-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծանուցման հնարավորությունը, առաջարկում ենք Նախագծի 325-րդ հոդվածի 2-րդ մասում «255-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները,» բառերից հետո լրացնել «առկայության դեպքում էլեկտրոնային փոստի հասցեն» բառերը:		
27.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 335-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 335-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որից նույն օրենքի 327-րդ հոդվածով սահմանված կարգով մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և մաքսային մարմիններին վճարման	Ընդունվել է	Ընդունվել է

			ենթակա այլ վճարների գծով պարտավորությունների կատարումից հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվի առնելով, որ ապրանքների վերցման նպատակը նաև տուգանքի գումարի գանձման ապահովումն է, առաջարկում ենք Նախագծի 335-րդ հոդվածի 1-ին մասում «327-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերից հետո լրացնել «տուգանքի,» բառը:		
28.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետ	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «**սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթի իրականացում**՝ օրենքով պետական այլ մարմիններին վերապահված և օրենքով նախատեսված դեպքում մաքսային մարմիններին վերապահված վերահսկողական կամ հսկողական գործառույթների իրականացում մաքսային մարմինների կողմից:»:	Ս.թ. հուլիսի 6-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-323-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 31-ին: Հաշվի առնելով այն, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունվելուց հետո ուժը կորցրած է ճանաչվելու գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը՝ ՀՕ-323-Ն ՀՀ	Ընդունվել է

				օրենքով կատարված փոփոխությունները ներառվել են Նախագծում:	
29.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 216-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ ենթակետեր	Նախագծի 216-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 11-րդ և 12-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «11 որպես սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթի իրականացում՝ պետական սահմանի անցման կետերում իրականացնել սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային, անասնաբուժական, բուսասանիտարական վերահսկողության գործառույթներ. 12 օրենքով նախատեսված դեպքում իրականացնել սույն մասի 11-րդ կետով չնախատեսված սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթներ.»:	Ս.թ. հուլիսի 6-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-323-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 31-ին: Հաշվի առնելով այն, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունվելուց հետո ուժը կորցրած է ճանաչվելու գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը՝ ՀՕ-323-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունները ներառվել են	Ընդունվել է

				Նախագծում:	
30.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 216-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր	Նախագծի 216-րդ հոդվածը լրացվել է 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «4.Մաքսային մարմինները սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթ իրականացնելիս առաջնորդվում են տվյալ գործառույթի ոլորտը կարգավորող օրենսդրությամբ: 5. Սահմանային վերահսկողության կամ սահմանային հսկողության այլ գործառույթը մաքսային մարմինն իրականացնում է գործառույթի ոլորտը կարգավորող օրենքով ուղղակի նախատեսված լինելու դեպքում: 6. Մաքսային մարմինները սույն հոդվածով նախատեսված գործառույթն իրականացնում են մաքսային մարմնի անունից: 7. Սույն հոդվածով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:»:	Ս.թ. հուլիսի 6-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-323-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 31-ին: Հաշվի առնելով այն, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունվելուց հետո ուժը կորցրած է ճանաչվելու գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը՝ ՀՕ-323-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունները ներառվել են Նախագծում:	Ընդունվել է

31.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 174-րդ հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 174-րդ հոդվածի 8-րդ մաս շարադրել հետևյալ բովանդակությամբ. «8. Միության անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքները միջազգային փոստային առաքումներով կամ փոխադրողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվում են առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, եթե ապրանքների արժեքը չի գերազանցում 200 հազար դրամը, և (կամ) քաշը չի գերազանցում 31 կիլոգրամը:»:	Ս.թ. հուլիսի 6-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-323-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել ս.թ. հուլիսի 31-ին: Հաշվի առնելով այն, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունվելուց հետո ուժը կորցրած է ճանաչվելու գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքը՝ ՀՕ-323-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունները ներառվել են Նախագծում:	Ընդունվել է
32.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 338-րդ հոդվածի 8-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 338-րդ հոդվածը լրացնել 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Սույն օրենքի 174-րդ հոդվածի 8-րդ մասը կիրառվում է, քանի դեռ Եվրասիական տնտեսա-	Ընդունվել է	Ընդունվել է

			կան հանձնաժողովի կողմից սահմանված նորմերը գերազանցում են 200 հազար դրամին համարժեքը գումարը:		
33.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 338-րդ հոդված 9-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 338-րդ հոդվածը լրացնել 9-րդ մասով, հետևյալ խմբագրությամբ՝ «9. Սույն օրենքի 316-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորումները տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:»:	Ընդունվել է	Ընդունվել է
34.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի մի շարք հոդվածնե ր	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, ուստի, անհրաժեշտ է Նախագծի ամբողջ տեքստում համարակալումը համապատասխանեցնել օրենքի հիշյալ պահանջին:	Նախագծի մի շարք հոդվածներում կատարվել են տեխնիկական բնույթի համապատասխան եզրումներ:	Ընդունվել է
35.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի մի շարք հոդվածնե ր	Հաշվի առնելով այն, որ Նախագծում լրացվել են նոր հոդվածներ՝ Նախագծի մի շարք հոդվածների համարակալումները փոփոխվել են:	Նախագծի մի շարք հոդվածներում կատարվել են տեխնիկական բնույթի համապատասխան եզրումներ:	Ընդունվել է
	«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքի վերնագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Հետևաբար, Առաջարկում ենք վերոնշյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել:		
	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում օրենսգրքի վերնագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «անհատ ձեռնարկատեր» բառերից առաջ լրացնել «6.» թիվը:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում օրենքի վերնագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186» բառերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «5» թիվը փոխարինել «9» թվով «3-րդ» բառը «5.1-ին» բառով և «մաքսային մարմինները» բառերից առաջ	Ընդունվել է	Ընդունվել է

			լրացնել «5.1» թիվը: Նախագծով կատարվող լրացումը դիտարկել «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքի 9-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում:		
2.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «փոփոխություն» բառը, քանի որ նախագծով կատարվում են միայն լրացումներ, և, միևնույն ժամանակ, «լրացում» բառը անհրաժեշտ է փոխարինել «լրացումներ» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
	«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ				